

HOVSEP EMIN: THE GERMS OF THE BOURGEOIS DEMOCRATIC PERCEPTION OF THE NATIONAL LIBERATION MOVEMENT IN ARMENIAN ENVIRONMENT

S. Khachatryan

Armenian Liberation movement had a new rise in the second half of the 18th century, connected with the foundation of the Armenian bourgeoisie. On this stage the centers of the liberation movements were focused on the Armenian communities, where the bourgeois relationships were in upsurge. But these countries also experienced discriminations, economic and political pressures, which made the Armenian trade bourgeoisie to consider the foundation of a strong national state and power. Due to these circumstances the Armenian bourgeoisie, settled in other countries, had to liberate Armenia from the Turkish-Persian servility. During this process, in the second half of the 18th century the Armenian- Indian communities were quite active, who formed a new bourgeois democratic phase of the Armenian liberation movement and social and political thinking. The outstanding representative of this period was Hovsep Emin (1726-1809), who founded the initial conception of the liberation through regional means: the cooperation of the exploited nations, mainly Georgians.

ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՀՅՈՒՄԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Ա. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

*Պատմական գիտությունների թեկնածու,
Գավառի պետական համալսարանի պատմության ամբիոնի դասախոս*

Թռուցիկ դիտարկումներից անգամ նկատվում է, որ գորգագործական բազմաթիվ կենտրոններում արմատացած գորգերի մի շարք տիպեր ակնհայտորեն նմանվում կամ կրկնում են Արցախյան գորգերին: Արցախյան գորգերի ավանդույթները նկատվում են հայոց մշակութային տարածքում գտնվող գորգագործական կենտրոնների մեծ մասում, սակայն դրանց արտահայտությունների քանակով ու կարևորությամբ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Շիրվանի, Դերբենտի, Ղարադաղի, Ուրմիա լճի ավազանի և Փոքր Ասիայի գորգագործական կենտրոնները: Մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզել ենք, որ հայոց գորգագործական ավանդույթների ներկայության առումով հատկապես ուշագրավ է հյուսիսարևելյան Այսրկովկասը: Ընդհանրապես հայտնի է, որ հայոց գորգագործական մշակույթի գնահատման ու արևելյան գորգերի համակարգում դրա կարևորման հարցում առաջնային նշանակություն ունի հայոց գորգագործական ավանդույթների տարածման արեալների ու դրանց արտահայտությունների բացահայտումը: Այս հաղորդմամբ մենք փորձում ենք ներկայացնել վերն ասված տարածաշրջանի Շիրվանի, Շաքիի, Ղուբայի ու Դերբենտի գորգագործական կենտրոնների առնչությունները հայոց մշակութային գույր-

ծունեության հետ:

Այդ առումով մեծ կարևորություն է ներկայացնում տարածաշրջանի պատմական ժողովրդագրության նկարագիրը, որին վերաբերող տվյալները ներկայացնում են վաղ միջնադարից մինչև մեր ժամանակները: Հայտնի է, որ այս տարածաշրջանի ժողովրդագրական պատկերում վաղ միջնադարից բավականին ազդեցիկ տեղ ուներ հայ հանրույթը: Հայոց թվաքանակը այդ տարածաշրջանում այնքան զգալի էր և ազդեցիկ, որ այդտեղ XI - XIII դարերում ձևավորվել էր առանձին հայկական թագավորություն:¹ Դեռ XX դ. կեսերին Դերբենտի ու Խաչմասի մերձակայքում պահպանվել էին այդ իրողությունը հաստատող վիճագիր հուշարձաններ, որոնք իր ժամանակին տեսել ու նկարագրել է մահ Մակար արքեպիսկոպոս Բարխուտարյանը:²

Նա XIX դ. վերջերին Խաչմասի մերձակայքում գտնվող երկու հին գերեզմանոցներում գյուղացիների օգնությամբ հողից հանել ու մաքրել էր բազմաթիվ տապանաքարեր, որոնց արձանագրություններից պարզվել է, որ հայերն այդտեղ բնակվել են առնվազն 573-1890 թթ.: Այդ տեղի մացառուտներով ծածկված հանգստարանում Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցն էլ, Բարխուտարյանցից առաջ՝ 1840-ականների վերջին, տեսել էր Աղվանից վերջին թագավորի՝ Սևադայի որդի Սեմեքերիմի տապանաքարը³, բայց Մակար Բարխուտարյանցի այնտեղ գտնվելու ժամանակ այն արդեն անհայտացած էր:⁴ Մակար Բարխուտարյանցի հավաքած նյութերը փաստում են, որ Դերբենտ - Մախաչկալա տարածաշրջաններում մինչև XIX դ. վերջերը պահպանվել էին մահ հայոց ներկայությունը մատնանշող բազմաթիվ ավանդություններ ու տեղանուններ և որ այդ տարածաշրջաններում ժամանակին գոյություն են ունեցել հայաբնակ բազմաթիվ բնակավայրեր:

Չնայած տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակների պարբերաբար կրկնվող կտրուկ շրջադարձերին, Այսրկովկասի հյուսիսարևելյան տարածքներում շարունակում էին գոյատևել հայկական կիսանկախ իշխանություններ, այդ թվում՝ Կուտկաշենի մելիքությունը:⁵ Արտեմ Արարատսկին ականատեսի աչքով հիշատակում է XVIII դ. վերջին այդ տարածքներում՝ Մուշկյուրի հովտում տեղաբախշված հայկական տասնյակ ծաղկուն գյուղերի մասին:⁶

XIX դարի վերջերին, դեռևս թարմ պատմական դեպքերի հետ կապված վավե-

¹ **Մատթեոս Ուռհայեցի**, ժամանակագրություն: Աշխարհաբար թարգմ. և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյան, Եր., 1991, էջ. 151-152; **Абь-Исхак ал-Истахри**, Книга оумейи и царства. Перевод и комментарии Н. А. Караулова.- СМОМП, вып. 29, Тифлис, 1901, էջ 97, 107; **Ս. Բարխուտարյանց**, Դերբենտի հայ- աղվանական թագավորությունը.- Պատմաբանասիրական հանդես, Եր., 1969, N 3, էջ 139-141:

² **Ս. Բարխուտարյանց**, նշվ. աշխ., էջ 125-147:

³ **Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանց**, ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան: Մասն Բ, Տփղիս, 1858, էջ 420 /հետայսու՝ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանց/:

⁴ **Մակար Բարխուտարյանց**, նշվ. աշխ., էջ 76-77:

⁵ **В. Н. Левуатов**, Очерки из истории Азербайджана в XVIII веке, Баку, 1948, էջ 71-72:

⁶ Жизнь Артемия Арапатского, Издание подготовил К. Н. Григорян при участии Р. Р. Орбели, М., 1981, էջ 128-129:

րագրերի ու հուշերի հիման վրա արված ուսումնասիրությունները թույլ են տալիս պատկերացում կազմել այդ տարածաշրջանի հայոց նկարագրի, դրանց ու արցախահայերի կապերի, այդտեղից արտագաղթած, ինչպես նաև իսլամ ընդունած հայերի քանակի մասին: Մասնավորապես, միայն XVIII դարի առաջին քառորդում, թուրք-պարսկական պատերազմների, լեզգիների իրար հաջորդող ասպատակությունների ու դրանց հետևած սովի հետևանքով Շաքի-Շիրվան տարածաշրջանում իսլամ են ընդունել ավելի քան տասը հազար հայեր:⁷ 1725 թվականի փետրվարի 5-ին վրաց Վախթանգ VI թագավորին ուղղված մի նամակում հաղորդվում է, որ լեզգիների կողմից ամբողջովին թալանվել ու թուրքացվել են Շաքիի, Շամախու, Ղարասուի, Մուշկյուրի ու հարակից տարածաշրջանների հայաբնակ գյուղերը: Դրանցից զերծ չի մնացել նաև Արցախը և «այս վերոյ գրեալ երկիրներեն թե եսիր, թէ շորեղեն, թէ բրինձ, թէ ցորեն բոլորը տարան Դաղստան»:⁸ Այստեղ խոսքը վերաբերում է 1711-12 թվականներին կատարված լեզգիների արշավանքին, որը հսկայական ավերածություններ պատճառեց տարածաշրջանին, այդ թվում Բարգուշատից Ջրաբերդ ու Գանձակ ընկած տարածքներին:

Այսպես թե այնպես, այդօրինակ հաճախակի կրկնվող իրադարձությունների հետևանքով Այսրկովկասի հյուսիսարևելյան հայահոծ տարածաշրջաններում տեղի են ունեցել հայ բնակչության արտահոսքի, դավանափոխության անընդմեջ գործընթացներ: Ղազար քահանա Յովսեփյանը իր հավաքած նյութերի հիման վրա պարզել է, որ միայն 1750-ական թթ. Շաքիի տարածաշրջանում բռնի դավանափոխ է արվել շուրջ 15000 ծուխ հայ, որի արդյունքում թուրքացվել է 29 հայկական գյուղ:⁹ Շամախու ու Շաքիի տարածաշրջաններին հսկայական վնաս է հասցնում Նադիր Շահի արշավանքը՝ տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ գերևարվում ու տարվում են Պարսկաստան:¹⁰

Սակայն, դրան զուգահեռ, հետևել են արցախահայոց տեղաշարժման նոր ալիքներ: Մասնավորապես, միայն 1790-ական թթ. Արցախից այդտեղ է վերաբնակվել շուրջ 12000 ծուխ հայ:¹¹ Նման պարբերաբար կրկնվող տեղաշարժերով փաստորեն կրկին բնակեցվել ու հայ բնակիչներով համալրվել են հայաթափման եզրին կանգնած բազմաթիվ բնակավայրեր ու այդ բոլոր դեպքերում էլ հոսքը հիմնականում կատարվել էր Արցախի գյուղերից: Այս իմաստով հատկանշական է Շաքիի տարածաշրջանում գտնվող Սոգութլու գյուղի օրինակը, որի մա-

⁷ **Եսայի Յասան Ջալալյան**, Պատմութիւն կամ յիշատակ ինչ ինչ անցից դիպելեց յաշխարհին Աղուանից, Շուշի, 1839, էջ 29 /հետայսու՝ Եսայի Յասան Ջալալյան/, ինչպես նաև՝ **Лев-уатов Н.**, նշվ. աշխ., էջ 92:

⁸ Армяно-русское отношение в XVIII веке. Сборник документов, т.2, часть 2., под редакцией Ашота Иоаннисяна, Ер., 1967, стр. 230-233:

⁹ **Ղազար քահանա Յովսեփյան**, Ակնարկներ ուտիացի եվ մահմեդական հայերի մասին, Թիֆլիզ, 1904, էջ 64- 65:

¹⁰ **Սակար Բարխուտարեանց**, նշվ. աշխ., էջ 56:

¹¹ **Բեկնազարեանց Ապրես**, «Գաղտնիք Ղարաբաղի»: Առաջաբան և գրաբարից աշխարհաբարի թարգմանությունը Սակար վարդապետ Բարխուտարեանցի, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 241-242, հետայսու՝ Գաղտնիք Ղարաբաղի/:

սին Եսայի Դասան Զալալյանը գրում է՝ «Եւ ոմն Բարսեղ անուն քահանայ, որ էր բնիկ Ղարաբաղու երկրեն Խաչինու, և ի յազգէ մելիքաց էր՝ որ ընդ գնալոյ ժողովրդեանն սոքա ևս ազգաւ գնացեալ էին և զՍոքութլու գեղն նորոգ շինեալ և բնակեալ»:¹² Այսրկովկասի հյուսիսարևելյան տարածաշրջաններում արցախյան ավանդույթների առկայության մասին ավելի ակնառու են պատմամշակութային մի շարք կարևոր դրսևորումներ, որոնք արտահայտված են լեզվաբարբառային, տարազի ու բնակարանային համալիրներում:

Մասնավորապես, Եսայի կաթողիկոսն իր ժամանակին Շիրվանի մասին գրել էր. «և երկիրն էր բարելի և շեն և մարդաշատ, թե հայ ազգոք, որ ի Ղարաբաղի երկրեն ժողովուրդք յոլովք անցեալ էին յերկիրն այս ավելի քան տեղականսն. և թէ այլ ազգօք որ բնիկ ի յերկրեն են»:¹³ Մակար Բարխուտարյանցը, ընդհանրացնելով իր հավաքած տեղեկությունները, նշում է որ «Դարբանդի, Ղուբայի, Բագուի, Շամախու, Շաքուայ և ճառի և սոցա բոլոր գաւառների /բացի Կասպականից/ հայերեն ընդհանուր տիրող բարբառն է Արցախի այժմեան գործածական լեզուն, քանզի ինչպես գիտենք, կանխաւ, բնակչաց ամենամեծ մասն գաղթած և տեղափոխված են Արցախից: Սպահանից, Խոյից և Թեհրանից երկիրս գաղթողներն ևս պահպանուած են իւրեանց նախկին հայրենեաց գավառական հայերեն բարբառը»:¹⁴ Տեղում արմատացած արցախյան մշակութային համալիրների վերաբերյալ XIX դ. սկզբներին շուշեցի ուղեգիր Տեր Բաղդասար Գասպարյանը գրել է, «հայք խոսին որպես ղարաբաղցիք և զգեստիւ հայոց հնոց կարծօրեն և տեսլեամբ գեղեցիք»:¹⁵ Նույնը ուղեգիրը գրել է նաև Շաքիի մասին:¹⁶ Տեր Բաղդասար Գասպարյանը, հավանաբար նկատի ունենալով այդ տարածաշրջանների հայ բնակչության սովոր լինելու հանգամանքը, Շիրվանից մինչ Դերբենտ համարել է Դայաստան:¹⁷

Այդ դեպքերից շուրջ հարյուր տարի անց Մակար արքեպիսկոպոս Բարխուտարյանցը տեղում դեռևս մնացած հայերից ու մահմեդականություն ընդունած հայերից հավաքած տեղեկություններից պարզել է, որ Խաչմասուն՝ Մուշկյուրի երբեմնի խոշորագույն բնակավայրերից մեկում, իշխողները ավանդաբար եղել են հայերը: Նա հիշատակում է տեղացիների մոտ մեծ հարգանքի արժանացած Դովսեփ բեկ Զավադբեկյանի ու նրա նախնիների մասին, սակայն ավելացնում նաև, որ տեղի հայերն արդեն խոսում էին տաճկերեն:¹⁸

Մակար Բարխուտարյանցը հայոց երբեմնի ներկայությունը վկայակոչող ավանդություններ, լեզվաբաններ ու տեղանունների մասին տվյալներ է մատնանշում նաև Շաքիի ու դրանից հյուսիս գտնվող գավառների՝ մասնավորապես ճա-

¹² Նույնը, էջ 33:

¹³ **Եսայի Դասան Զալալյան**, էջ 32-33:

¹⁴ **Մակար Բարխուտարեանց**, նշվ. աշխ., էջ 149-150:

¹⁵ **Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցի**, Ծաղկաքաղ աշխարհացոյց: Տպագրության պատրաստեց՝ Դ. Քյուրտյան.-Բանբեր Մատենադարանի 9, Եր., 1969, էջ 293:

¹⁶ **Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցի**, նույն տեղում:

¹⁷ Նույնը, էջ 292-293:

¹⁸ **Մակար Բարխուտարեանց**, նշվ. աշխ., էջ 75-76:

ռի վերաբերյալ:¹⁹ Դրանք հստակորեն ցույց են տալիս, որ Շաքի-Ջաքաթալա-Բելլոկան տարածաշրջանում մեծաքանակ էին հատկապես Արցախի Ջրաբերդ, Վարանդա ու Խաչեն գավառներից այդտեղ տեղափոխված վերաբնակիչները:²⁰

Ակնհայտ է, որ այս իրավիճակում խնդրո առարկա տարածաշրջանի մշակութային նկարագրում որոշակիորեն պետք է ընդգծվեր հայոց բնորոշ մշակութային համակարգն ու այդ թվում՝ գորգագործական մշակույթը: Շիրվանի գորգագործական կենտրոններում արցախյան ավանդույթների ներկայության առումով մենք կարևորում ենք նաև Ելիզավետապոլի գավառի կազմում եղած Արեշի գավառը: Մինչ XX դարի սկզբները ամբողջովին հայաբնակ էին այդ գավառի գյուղերը՝ Քանդակը, Հավարիկը, Մամաթավան, Խանավադը, Մագուրղուն, Խալդանն ու Արեշը, որոնք էլ հայտնի էին որպես գորգագործական կենտրոններ:²¹ Ս. Բարխուտարյանը նկարագրելով Շամախու ու մերձակա գավառների բնակչության՝ այդ թվում հայերի գործունեության ոլորտներ, նշում է նաև ոստայնակությունն ու դրա արտադրանքը՝ գորգերն ու կարպետները, անկողնապարկերն ու խուրջիները, բուրդն ու մանվածքը, ներկանյութերը և այլն, որոնք վաճառահանվում էին Աղդաշի շուկայում:²²

Ընդհանրապես, այդ տարածաշրջաններ վերաբնակված արցախցիների ունեցած դերի ու նշանակության մասին պատկերացում կազմելու համար տիպական օրինակ կարող է ծառայի արցախյան գորգագործության նշանավոր կենտրոն, Վարանդա գավառի **ճարտար** գյուղը: Մակար Բարխուտարյանցի ներկայացրած տվյալների համաձայն, այդտեղից XVII-XVIII դդ. արտագաղթածները բնակություն էին հաստատել Շամախու մերձակայքի Արփաուտ, Ղարա - Քարքանջ, Կուրճեվան, Գանձակ, Քեշխուրդ, Քյալբանդ, Վանքաշեն ու Թալիշ գյուղերում:²³ Նշենք, որ Մակար Բարխուտարյանը իր ուսումնասիրած տարածաշրջանների՝ ներկայիս Ադրբեջանի Ղուբայի, Կուսարի, Ջաքաթալայի, Բելլոկանի, Շաքիի, Շամախու, Գյուլջայի, Եվլախի շրջանների բնակավայրերի էթնիկական կազմի ու դրանց ծագումնաբանության մասին խոսելուց, որոշ դեպքերում մատնանշել է հայերի նախկին բնակության միայն գավառների անվանումները՝ հիմնականում Ջրաբերդ, Գյուլիստան, Խաչեն, Վարանդա, Դիզակ²⁴, իսկ ավելի շատ՝ ներկայացրել է կոնկրետ գյուղերի անվանումներ՝ ընդհանուր թվով երեսուներեք գյուղ: Ընդ որում, դրանցից քսանհինգը Վարանդայի ու Դիզակի գյուղերն են՝ Ավետարանոցը, Սոսը, Հաղորտին, Մուշկապատը, Աշանը, Գիշին, Դռնավարզը, Ծովատեղը, Մամնան, Քերթը, Ղավախանը, Թաղավարդը, Հերիերը, Շոշը, Ննգին, Հացին ու վերն արդեն նշված ճարտարը, Շեխերը, Դրախտիկը /բուլորը՝ Վարանդա/, Հաղուրթը, Տողը, Տունին, Թաղերը, Հարարը, Ծամծորը /բուլ-

¹⁹ Նույնը, էջ 134-140:

²⁰ Նույնը, էջ 112-123:

²¹ Նույնը, էջ 141-143, **Ա. Լուսենց**, Արեշի բարբառը, Եր., 1982, էջ 5-7:

²² **Մակար Բարխուտարյանց**, նշվ. աշխ., էջ 144:

²³ Նույնը, էջ 97, 104, 107: Խնդրո առարկա հարցերի մասին տես նաև՝ **Քաջբերունի**, Բազմամիլիոն , ժառանգություն.- Վավերագրեր-2 /կազմողներ Ա. Ղազիյան, Ա. Քալանթարյան/, Եր., 2001, էջ 76:

²⁴ **Մակար Բարխուտարյանց**, նշվ. աշխ., էջ 89-134:

րը՝ Դիզակ/։ Ջրաբերդի ու Խաչենի գյուղերից հիշատակվում են Խնածախը, Բալլուջան, Դաշբուլաղը, Խանձքը, Վանքը, Նախիջևանիկը, Առաջածորը, Խնձրիստանը։²⁵

Վերոհիշյալ Արփաուտ, Դարա - Քարքանջ, Կուրճեվան, Գանձակ, Քեշխուրդ, Քյալբանդ, Վանքաշեն ու Թալիշ գյուղերի հետ միասին, Մակար Բարխուտարյանցի տեղեկությունների համաձայն Վարանդայի ու Դիզակի նշված գյուղերից տեղափոխվածները հաստատվել են Գիրկ, Ազայի շեն, Ղալաքյա, Խանի շեն, Փախրաքյուշ, Մեյսարի, Աղբուլաղ, Բուզվանդ, Քովլուջ, Դայմա դաղ, Ավանաշեն, Ռուշան, Վանքաշեն գյուղերը։²⁶ Հարկ ենք համարում ասել, որ Արցախի մեր հիշատակած բնակավայրերի մեծ մասը գորգագործական ավանդույթներով հայտնի գյուղեր են։ Այդ ամենը վերաբերում է նաև մյուս տարածաշրջաններից՝ մասնավորապես Նոր Զուղայի մերձակա Փերիա գավառից, Սպահանից, Թեհրանից ու մանավանդ Խոյ-Սալմաստից, Նախիջևանից ու Գողթան գավառից Այսրկովկասի հյուսիս-արևելք տեղափոխված հայերին։²⁷

Բայց այդ այդ ամենը մշակութային ներգործության միայն ակնհայտ գործոններ են։ Կարծում ենք, որ հիշատակված տարածաշրջանի գորգագործական կենտրոններում արմատացած գորգերի ու կարպետների տիպերի ու դրանց գեղազարդման համակարգում, կատարման տեխնիկա-տեխնոլոգիական չափանիշներում արցախյան ավանդույթների արմատավորման ու մանավանդ հետագա զարգացումների հարցում, առանձնահատուկ է իսկան ընդունած և ազգային լեզուն կորցրած հայերի դերը։ Հայտնի է, որ XVII- XX դդ. խնդրո առարկա տարածաշրջաններում պարբերաբար եղել են զանգվածային կրոնափոխության դեպքեր, այդ թվում 1918-20թթ., երբ Շամախու, Շաքիի ու Գյուլչայի գավառների 52 գյուղից մասնակիորեն փրկվեցին միայն տասը՝ Միրզաբեկլուն, Խոշկաշենը, Նիժը, Ճալեթը, Թոսիկը, Վարդաշենը, Մեծ Սոգութլուն, Փոքր Սոգութլուն, Գիրկը, Զոռլուն։²⁸ Դրանց շնորհիվ շատ ավելի դյուրին են դառնում էթնոմշակութային այլ միջավայրում հայոց մշակութային ավանդույթների տեղայնացման, էթնիկական այլ հանրույթների կողմից դրա յուրացման գործընթացները։ Դավանափոխության հետ միասին, թեև աստիճանաբար տեղի էր ունենում նաև մայրենի լեզվի կորուստ, բայց, այնուամենայնիվ, դա չի ենթադրում տնտեսամշակութային գործունեության համակարգի փոփոխություն, ուստի այն ամենն, ինչ ունենում է դավանափոխ հանրույթը, մեխանիկորեն դառնում է օտար հանրույթի մշակութային սեփականություն։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բռնի դավանափոխության ալիքները սկիզբ են առել առնվազն XIV-XV դարերից, պետք է ենթադրել, որ արդեն XVI-XVII դարերում դավանափոխ հայերի սերունդները դիտվում էին որպես մահմեդական տարրեր՝ լեզգի, թաթար, պարսիկ և այլն, որոնք, սակայն, շարունակում էին պահպանել ու զարգացնել իրենց նախ-

²⁵ Նույնը, էջ 89-110:

²⁶ Նույնը, էջ 91-94, 117, 120-121, 150:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Геноцид армян в Османской империи: Сборник документов и материалов/ под ред. **М. Г. Нерсисяна**, Ереван, 1982, стр. 538-539:



Պատկեր 1. Գորգ «Տավուշ»,
Շամախի, 1898 թ.

միներին բնորոշ զբաղմունքներն ու սովորույթները:²⁹

Պատմամշակութային այսօրինակ գործընթացները, ինչպես նկատում ենք, զգալիորեն բարդացնում են ծագումնաբանական հետազոտությունների կատարումը, ու միաժամանակ, հնարավորություն են տալիս ցանկության դեպքում յուրացնել իրականում այլ էթնիկական հանրույթների ստեղծած մշակութային ժառանգությունը: Բարեբախտաբար, 1920-30-ական թթ. հրատարակված տեղեկատվական ու տնտեսագիտական բնույթի ուսումնասիրություններում նշվել են այդ տարածաշրջանների հայոց գորգագործական մշակույթի նկարագրին վերաբերող կոնկրետ տվյալներ: Մասնավորապես Մ. Իսաևը՝ Կովկասում գորգագործության զարգացման ասպարեզում այդ հայտնի մասնագետը, գրում է, որ մինչև 1920-ական թվականների սկիզբը զանգվածային գորգագործության կենտրոններ էին Կարամարյանի ենթաշրջանի հայկական գյուղերը՝ Գիրկը, Ռուշանը, Ուշտալը, Սոթանքենդը և, որ մեզ համար հատկապես կարևոր է, շեշտում է, որ

նրանց արտադրանքը որակով ու տեխնիկատեխնոլոգիական առումներով նույնն է, ինչ որ արցախյանը:³⁰

Ավելորդ չենք համարում նշել, որ այդ տարածաշրջաններում գործված գորգերի տեխնիկատեխնոլոգիական ու զեղազարդման համակարգերի նմանություններն արձանագրել են նաև մի շարք այլ ուսումնասիրողներ: Ուղղակի նրանք չեն անդրադարձել այդ երևույթի պատճառներին ու դրանք չեն դարձրել ուսումնասիրման առարկա: Մասնավորապես, ադրբեջանցի ուսումնասիրողներից Ա. Բաբաևը իր հաղորդումներից մեկում նշելով հանդերձ, որ «վաղ ժամանակներում Շաքիում և մերձակա գորգագործական կենտրոններում գործել են Ղարաբաղին բնորոշ գորգեր», չի փորձել կամ էլ նպատակահարմար չի գտել բացատրել դրա պատճառներն ու բացահայտել դրանց կոնկրետ ակունքները:³¹



Պատկեր 2, Գորգ «Տավուշ»,
Շաքի-Ջաքաթալա /հատված/,
19-րդ դ. վերջ

²⁹ Մակար Բարխուտարեանց, նշված աշխ., էջ 22:

³⁰ Մ. Իսաև, Ковровое производство Закавказья, Тифлис, 1932. стр.121:

³¹ А. А. Бабаев, Ковры Шеки-Закатальской и Кахи-Белоканской зон. Международный симпозиум по искусству восточных ковров, тезисы, Баку, 1983, с. 36.

Սակայն մենք, նկատի ունենալով ասվածները, կարող ենք վստահաբար եզրակացնել, որ Այսրկովկասի վերը հիշատակված գորգագործական կենտրոններում ավանդական համարվող գորգերի տիպերի մի զգալի մասի ակունքները պետք է փնտրել հիմնականում Արցախի ու Սյունիքի գորգագործական կենտրոններում:

Գորգերի առանձին տիպերի առումով՝ Դերբենտի ու Ղուբայի գորգագործական կենտրոններում խոսքն առաջին հերթին վերաբերում է **«Զրաբերդ»** հորինվածքի տարբերակներով գեղազարդված գորգերին /այդ թվում՝ այսպես կոչված **«Ձեյխուր»** տիպին/, **«Գետաշեն»**, **«Որոտան»** /հայտնի է նաև **«Լեզգի»** անվանումով/ և **«Ամարաս»** /հայտնի է նաև **«Լամպա Ղարաբաղ»** անվանումով/ տիպի գորգերին:



Պատկեր 3. Գորգ «Որոտան»,
Շաքի -Զաքաթալա /հատված/,
19-րդ դ. վերջ

Շիրվանի ու Շաքիի տարածաշրջանների գորգագործական կենտրոններում, բացի այդ նշվածներից, լայն տարածում ունեին նաև **«Ծարտար»**, **«Հաղպատ»**, **«Տավուշ»** /պատկեր 1/, **«Ուտիք»**, **«Ոսկանապատ»**, **«Բանանց»**, **«Փյունիկ»**, **«Սիսական»**, **«Գանձակ»** և մի քանի այլ տիպեր: Ասվածների վկայություններն են վերջին տարիներին հրապարակված նյութերը, մասնավորապես **«Հալի»** հանդեսի խմբագրակազմի անդամներից մեկի՝ Տոնի Հազլեդինի հրապարակած գորգապատկերները՝ **«Տավուշ»** /պատկեր 2/, **«Վահան»**, **«Որոտան»**/պատկեր 3/ և այլն, որոնք արվել են 1994 թվականին հեղինակի Զաքաթալա կատարած ուղևորության ընթացքում: Ընդ որում, Հազլեդինը շեշտելով դրանցում արցախյան ազդեցության առկայությունը, իր հաղորդման մեջ ներկայացրել է նաև քաղաքի կենտրոնում գտնվող հայոց եկեղեցու լուսանկարը:³² Այս տարածաշրջանում արցախյան ավանդույթների ներկայության մասին մի վկայություն էլ մենք համարում ենք ուսումնասիրողներին հայտնի **1851** թվականին գործված, հայտառ, թվակիր արձանագրությամբ **«Զրաբերդ»** գորգը /պատկեր 4/: Մեր պրպտությունների արդյունքում պարզել ենք, որ այն գործել են **Քարթանջ** գյուղում: Այս գորգի ծագման վայրի բացահայտման հարցում կարևոր նշանակություն ունի դրա ունեցած գրությունը, որտեղ հիշատակված **Սհարբեկով** հազվադեպ հանդիպող ազգանունով գերդաստան այդ նույն տարիներին ապրել է Քարթանջում: Այն հայտնի էր գյուղի համար կատարած իր բարեգործություններով, և ըստ էության էլ, խնդրո առարկա գորգը այդ ընտանիքի անդամներից մեկին՝ Միքայելին նվիրել է երախտապարտ համագյուղացիներից մեկը:³³

³² Tony Hazledine, On the Road to ZakatalaHali, the international Magazine of Antigue Carpet and Textile Art, December 1994/January issue 78, p. 91- 93:

³³ Տես՝ **Ա. Պողոսյան**, «Զրաբերդ» խմբի ծագումնաբանական ու տիպաբանման հարցերի շուրջ.-«Էջմիածին», նոյեմբեր-դեկտեմբեր, 2011, էջ 44:



Պատկեր 4. Գորգ «Ջրաբերդ»,
գ. Քարքանջ, 1850 թ.

Շիրվանի խմբին պատկանող գորգերից միանգամայն առանձնակի են վերը հիշատակված Կարամարյան ենթաշրջանի գորգերի մի խումբ, որոնց տեխնոլոգիաները, ինչպես իր ժամանակին բացահայտել է Մ. Իսաևը, նշանակալից չափով կրում են Ղարաբաղի, ինչպես նաև Բաքվի մերձակա գորգագործական կենտրոնների ազդեցությունը: Նա այդ գորգերի մասին հայտնում է, որ դրանք ունեին քառակուսի չափեր ու հազվադեպ էին վաճառահանվում: Սակայն շուկայում դրանք ունեին բարձր պահանջարկ, գնահատվում էին չափազանց բարձր ու հայտնի էին **«Էրմենի խիլա»** անունով: Իսաևը գրում է նաև, որ առաջին համաշխարհային պատերազմից հետո գորգագործությունն այդ ենթաշրջանում համարյա վերացել է:³⁴ Անշուշտ, դա էլ բնական էր, քանի որ բռնագաղթման ենթարկվեց այդտեղի հայ բնակչության մեծամասնությունը: Այդպիսով, նկատի ունենալով այս ամենը, կարող ենք եզրակացնել, որ Այսրկովկասի վերը հիշատակված գորգագործական կենտրոններում ավանդական համարվող գորգերի տիպերի մի զգալի մասի ակունքները պետք է փնտրել հիմնականում Արցախում և Սյունիքում:

Սակայն այդքանով չեն սահմանափակվում հայոց գորգագործական մշակույթին վերաբերող և Այսրկովկասի հյուսիսարևելյան գորգագործական կենտրոններում լայն տարածում ստացած գորգերի տիպերը: Մասնավորապես հայտնի է, որ Վասպուրականի արևելյան գավառների գորգագործական կենտրոնների ավանդույթներին վերաբերող ու մեր կողմից «Աղբակ» անվանումով տարբերակված բազմաթերթ վարդակով բնորոշվող տիպը լայնորեն հայտնի է այդ տարածքների և Ապշերոնյան թերակղզու մի շարք գորգագործական կենտրոններում:

Անշուշտ այսրկովկասյան գորգագործական ավանդույթների ձևավորման հարցում իրենց ուրույն դերն են խաղացել նաև կովկասյան մյուս ցեղերը, համեմայնդեպս, ուսումնասիրողները զգալի տեղ են հատկացնում լեզգիներին, որոնց վերաբերող գորգերը բնորոշվում են տեխնոլոգիական որոշակի առանձնահատկություններով ու, բացի այդ էլ, նրանք աչքի են ընկել հատկապես **«սումախ»**

³⁴ *С. С. Агаширинов*, Материальная культура лезгин XIX – начало XX в., М., 1978, стр. 81.

տիպի կարպետներ գործելու ասպարեզում:³⁵ Սակայն այսրկովկասյան գորգագործական կենտրոններում, հատկապես Ղուբայի, Խաչմասի ու Դյավաչիի շրջաններում, զգալի էր թաթերի նշանակությունը՝ հիմնականում նրանց էր վերաբերում «Չիչի», «Փիրբեդիլ», «Ղոնաղբենդ», «Սուրախանի» և մի շարք այլ շուկայական բարձր արժեք ունեցող գորգերի արտադրությունը:³⁶

Ինչպես Դերբենտի, այնպես էլ Շիրվանի գորգագործական կենտրոններում անշուշտ գոյություն են ունեցել նաև տեղական առանձնահատկություններ, որոնք մեծամասամբ վերաբերում են գորգ գործելու տեխնոլոգիաներին: Շիրվանի գորգագործական կենտրոններում, օրինակ, 19-րդ դարի վերջերից սկսել էին գործել նաև բարձր խտությամբ և բամբակյա միջնաթելով գորգեր, իսկ Դերբենտի գորգագործական կենտրոններում տարածում ունեցան մեկ միջնաթելով գործելու ավանդույթը:

Ամփոփելով այս հաղորդումը, կարող ենք արձանագրել, որ հյուսիսարևելյան Այսրկովկասի գորգագործական կենտրոններին վերաբերող ավանդույթների ձևավորման հարցում առանցքային դերակատարում են ունեցել Արցախից ու Սյունիքից դարեր շարունակ այդտեղ վերաբնակություն հաստատած հայերը ու նաև տեղի բնիկ ժողովուրդները, մասնավորապես՝ լեզգիներն ու թաթերը, ուստի մեր համար անընդունելի ու անհասկանալի է դրանք «ադրբեջանական» համարելու տեսակետը, որը գոյություն ունի գորգագետների շրջանում:

ԼՈՒՍԱՆՎԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Գորգ «Տավուշ», Գարդման-Շամախի, 1898 թ.:
2. Գորգ «Տավուշ», Շաքի-Ջաքաթալա, 20-րդ դ. սկ.:
3. Գորգ «Որոտան», Շաքի-Ջաքաթալա, 20-րդ դ. սկ.:
4. Գորգ «Ջրաբերդ», գ. Քարթանջ, 1850 թ.:

ТРАДИЦИИ АРЦАХСКОЙ КОВРОТКАЧЕСКОЙ КУЛЬТУРЫ В СЕВЕРО-ВОСТОЧНОМ ЗАКАВКАЗЬЕ

А. А. Погосян

В работе на основе демографических процессов 15-19 вв. автор представляет историю происхождения ковроткачества в северо-восточных регионах Закавказья. При этом отвергаются бытующие концепции, согласно которым коврам этого региона считаются частью так называемой "азербайджанской культуры". Исходя из первоисточников и имеющихся фактов, автор доказывает их армянское происхождение, и в частности, связывает традиции с ковроткацкими центрами Арцаха, Сюника и северо-восточных провинций Вaspуракана.

³⁵ Народы Кавказа, т. II, под редакцией *Б. А. Гарданова, А. Н. Гулиева, С. Т. Еремяна, Л. И. Лаврова, Г. А. Нерсесова, Г. С. Читая*, М., 1962, էջ 181, 183:

³⁶ *М. Исаев*, Ковровое производство Закавказья, Тифлис, 1932, էջ 180:

CARPET WEAVING ARTSAXH CULTURAL TRADITIONS IN THE NORTH-EAST OF THE SOUTH CAUCASUS

A. A. Poghosyan

On the basis of the demographic processes 15-19 cc., The author presents the history of the origin of carpet weaving in the north-eastern regions of the Caucasus. At the same time they reject prevailing concepts, according to which the carpets of this region are considered part of the so-called "Azerbaijani culture." Based on primary sources and the available facts, the author proves their Armenian origin and, in particular, the tradition of carpet weaving centers linked to the Artsakh and Syunik Province of north-eastern Vaspurakan.

ԱԳՐԱՐԱՅԻՆ ԳԵՐԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-1930 ԹԹ.

Բ. Մ. ԹԵՎՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

XIX դարի վերջին և XX դարի սկզբին կապիտալիստական արտադրահարաբերությունները, թեկուզ և շատ դանդաղ, թափանցում են նաև հայկական գյուղը, գյուղացիական մանր տնտեսությունները սկսում են կորցնել իրենց կայունությունը:

Հայաստանում ավելորդ բանվորական ուժի կուտակման գործընթացն ընթանում էր բավականին դանդաղ և թաքնված, չնայած այն բանին, որ արդեն գոյություն ունեին կապիտալիստական արդյունաբերական օջախներ, բնակչության հիմնական զանգվածը շարունակում էր զբաղվել գյուղատնտեսությամբ: Հայաստանը հիմնականում չի անցել արդյունաբերական կապիտալիզմի զարգացման փուլը, այդ իսկ պատճառով հարաբերական գերբնակչությունը գերազանցապես դրսևորվել է սոսկ ագրարային գերբնակչության ձևով, որն արտահայտվում էր արտագնացությամբ:

Արտագնացությունը Հայաստանի գավառներից մեծ չափերի հասավ հատկապես առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: Այսպես, 1912-1914 թթ. միայն Երևանի նահանգից արտագնացության է դիմել 119558 մարդ¹: Իսկ Ջանգեզուրից 1913 թ. միայն Բաքու է մեկնել 9454 մարդ²: Դա բավականին մեծ թիվ է այն ժամանակվա շուրջ մեկ միլիոն բնակչություն ունեցող Հայաստանի համար: Ընդ որում արտագնացների մեծ մասը Հայաստանի արդյունաբերության թույլ զարգացածության հետևանքով մեկնում էր նրա սահմաններից դուրս:

¹ Տե՛ս **Վ. Խոջաբեկյան**, Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1928-1978), Երևան, 1979, էջ 68:

² Տե՛ս "Экономический вестник ССР Армении", 1923, N 2, с. 26.